ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության օրհներգը

1. Հայաստանի Հանրապետության օրհներգը Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից է:

2. Հայաստանի Հանրապետության օրհներգը հանդիսավոր երաժշտական ստեղծագործություն է, որը կատարվում է սույն օրենքով սահմանված կարգով:

3. Հայաստանի Հանրապետության օրհներգը կատարվում է վոկալ, գործիքային, նվագախմբային, երգչախմբային, նվագախմբային-երգչախմբային տարբերակներով:

~~**4. Հայաստանի Հանրապետության օրհներգը պետք է կատարվի սույն օրենքի հավելվածով հաստատված երաժշտական խմբագրությամբ և տեքստի համապատասխանությամբ:**~~

4. Հայաստանի Հանրապետության օրհներգը պետք է կատարվի սույն օրենքի հավելվածով հաստատված երաժշտական և տեքստի խմբագրությամբ՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից պաշտոնապես հրապարակված տարբերակին համապատասխան՝ սույն հոդվածի 3-րդ մասում նշված կատարման տարբերակներից յուրաքանչյուրի համար առանձին:

5. Հայաստանի Հանրապետության օրհներգը օրենքով նախատեսված առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է օգտագործվել նաև սույն օրենքի հավելվածով հաստատված երաժշտական և տեքստի կարճ խմբագրությամբ՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից պաշտոնապես հրապարակված տարբերակին համապատասխան՝ սույն հոդվածի 3-րդ մասում նշված կատարման տարբերակներից յուրաքանչյուրի համար առանձին:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության օրհներգի կատարումը

1. Հայաստանի Հանրապետության օրհներգը պարտադիր կատարվում է՝

ա) Հայաստանի Հանրապետության Նախագահի երդման արարողության ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնը ստանձնելիս.

բ) Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի մասնակցությամբ պաշտոնական և հանդիսավոր արարողությունների ժամանակ.

գ) Հայաստանի Հանրապետության նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի գումարման պահին, ինչպես նաև հերթական նստաշրջանների բացման և փակման ժամանակ.

դ) Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվող պաշտոնական արարողությունների ժամանակ Հայաստանի Հանրապետության դրոշը բարձրացնելիս.

ե) օտարերկրյա պետությունների նախագահների, օրենսդիր մարմինների ղեկավարների, վարչապետների, պաշտոնական ներկայացուցիչների, միջպետական և միջկառավարական կազմակերպությունների ղեկավարների՝ Հայաստանի Հանրապետություն պետական և

պաշտոնական այցերի ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի հիմնադրույթներին համապատասխան.

զ) Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվող զորահանդեսների ժամանակ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում առավոտյան՝ Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման, և երեկոյան՝ Հայաստանի Հանրապետության դրոշի իջեցման ժամանակ, ինչպես նաև զինվորական կանոնագրքերով և կանոնադրություններով նախատեսված այլ դեպքերում.

է) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բարձրագույն կրթական հաստատություններում՝ անկախ սեփականության ձևից, ուսումնական տարվա սկիզբն ու ավարտը ազդարարելիս.

ը) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր հանրակրթական դպրոցներում, **<u>նախադպրոցական ուսումնական հաստատություններում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում</u>**՝ անկախ սեփականության ձևից, ամեն երկուշաբթի դասերը սկսելուց առաջ:

2. Հայաստանի Հանրապետության օրհներգը կարող է կատարվել՝

ա) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոչ պետական կազմակերպությունների և այլ անձանց կողմից անցկացվող հանդիսավոր արարողությունների և միջոցառումների ժամանակ.

բ) պետական տոների, պատմական իրողություններին նվիրված հանդիսավոր նիստերի, ժողովների ժամանակ.

գ) հուշարձանների, հուշաքանդակների և հուշատախտակների բացման հանդիսավոր արարողությունների ժամանակ:

3. Սույն հոդվածով սահմանված դեպքերում օրհներգի կատարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության օրհներգի օգտագործումը մարզական միջոցառումների ժամանակ

Հայաստանի Հանրապետության օրհներգը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվող միջազգային պաշտոնական մրցումների ու մրցաշարերի, համապետական մարզական պաշտոնական միջոցառումների բացման և փակման, **<u>ինչպես նաև այդ ընթացքում տեղի ունեցող պարգևատրման արարողությունների</u>** ժամանակ, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ տվյալ պետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 11. ~~**Անցումային դրույթ**~~

Հայաստանի Հանրապետության օրհներգը «Մեր հայրենիքն» է (տեքստն ու երաժշտությունը սահմանված են սույն օրենքի հավելվածում): ~~**Այն ուժի մեջ է մինչև Հայաստանի Հանրապետության նոր օրհներգի տեքստն ու երաժշտությունը օրենքով սահմանելը:**~~

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆԵՐԳԻ ՏԵՔՍՏԸ~~

~~(խոսքերը՝ Միքայել Նալբանդյանի)~~

~~Մեր Հայրենիք, ազատ, անկախ,~~

~~Որ ապրել է դարեդար,~~

~~Իր որդիքը արդ կանչում է~~

~~Ազատ, անկախ Հայաստան:~~

~~Ահա եղբայր, քեզ մի դրոշ,~~

~~Զոր իմ ձեռքով գործեցի,~~

~~Գիշերները ես քուն չեղա,~~

~~Արտասուքով լվացի:~~

~~Նայիր նրան՝ երեք գույնով~~

~~Նվիրական մեկ նշան,~~

~~Թող փողփողի թշնամու դեմ,~~

~~Թող միշտ պանծա Հայաստան:~~

~~Ամենայն տեղ մահը մի է,~~

~~Մարդ մի անգամ պիտ մեռնի,~~

~~Բայց երանի, որ յուր ազգի~~

~~Ազատության կզոհվի:~~

<u>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆԵՐԳԻ ՏԵՔՍՏԸ</u>

<u>(Հիմնված Միքայել Նալբանդյանի խոսքերի վրա)</u>

<u>Մեր Հայրենիք, ազատ, անկախ,</u>

<u>Որ ապրել է դարեդար,</u>

<u>Իր որդիքը արդ կանչում է</u>

<u>Ազատ, անկախ Հայաստան:</u>

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

Ահա եղբայր, քեզ մի դրոշ,
Զոր իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղա,
Արտասուքով լվացի:

Նայիր նրան՝ երեք գույնով
Նվիրական մեկ նշան,
Թող փողփողի թշնամու դեմ,
Թող միշտ պանծա Հայաստան: